ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ"

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0009 Երևան, Աբովյան 27

Հեռ. (37410)542779
Ֆաքս (37410)542779

“21” 01 2016թ. թիվ 23 ՀԳ.

«Գնումների աջակցման կենտրոն»
Պետական ոչ առևտրային կազմակերպության
պետ՝ պարոն Մ. Անանյանին

Հարգելի պարոն Անանյան

Ի կատարումն Ձեր 23.12.2015թ. թիվ 46/75 որոշման տեղեկացնում ենք, որ 2015թ. դեկտեմբերի 24-ին կայացել է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի գնումները գնահատող հանձնաժողովի նիստը և կազմվել թիվ 05 արձանագրությունը, որը էլեկտրոնային փոստով ուղարկվել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ և մրցույթի բոլոր մասնակիցներին (այդ թվում՝ «Դարֆ» ՍՊԸ-ին), որում բերված են առավել մանրակրկիտ հիմնավորումներ «Դարֆ» ՍՊԸ հայտի մերժման վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, քանի որ հնգօրյա անգործության ժամկետի ընթացքում «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից որևէ բողոք չի ներկայացվել, նշված ժամկետը լրանալուց հետո, դեկտեմբերի 30-ին կնքել է պայմանագիր «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ միջև:

Հարգանքներով՝

Գլխավոր տնօրեն Լ. Գալստյան